



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«05» Հոկտեմբերի 2018թ.

N 367

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N 33 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հոկտեմբերի 1-ի N 1360 -Ա որոշումը և Արմավիրի մարզի «Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2018 թվականի հոկտեմբերի 22-ի N 38 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի փետրվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների կազմերը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010 թվականի հուլիսի 8-ի N 238 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 33 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
 - 1) որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետում «Գագիկ Գաբրիելյան», «Նաիրա Զաքարյան» և «Լուսինե Հովսեփյան» բառերը համապատասխանաբար փոխարինել «Ալեքսանդր Ղուկասյան», «Լուսինե Միերյան» և «Դուստրիկ Կարապետյան» բառերով.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

X 

VERIFIED OCSP 06.11.2018 15:57:08 GMT+4

Подписано: GRIGORYAN KAREN 2212890816

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝

